# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.07.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ**

**քննող անձի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2018/86**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 20.06.2018թ. թիվ 03/26-3/11110-18 գրությամբ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 18.06.2018թ. թիվ 177 գրության հիման վրա, 20.06.2018թ. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 18.06.2018թ. թիվ 177 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ է ներկայացրել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն: Գնահատող հանձաժողովի 06.06.2018թ. թիվ 3 որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն: Հանձնաժողովը 06.06.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին: Գնահատող հանձնաժողովը 08.06.2018թ. թիվ 4 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված շեմը:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ Միքայել Ղարիբյանը:

**3. <u>«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն 28.06.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 05.06.2018թ. մասնակցել է Երևանի քաղաքապետարանի՝ «Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.06.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. տրվել է եզրակացություն, համաձայն որի «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն 05.06.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 79,608 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հանդիսացող «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի հարկային պարտավորություններ:

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. ստացված եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի դրույթով հանձնաժողովը որոշեց մերժել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը՝ սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ

կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն 05.06.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օր) ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 79,608 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ում բացված իր հաշիվներից օնլայն բանկինգ համակարգի միջոցով՝ 05.06.2018թ. արդեն իսկ վճարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունները, սակայն անհասկանալի պատճառներով հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգում երևացել է միայն 06.06.2018թ.:

Ստացվում է մի իրավիճակ, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը կատարել է նաև հարկային պարտավորությունների մասով իր պարտականությունները, որը սակայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգի թերացման հետևանքով զրոյացել է միայն 06.06.2018թ., այնուհետև, երբ Պատվիրատուն 06.06.2018թ. հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ստացվել է պատասխան, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն (05.06.2018թ.) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 79,608 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է,

ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Եթե նույնիսկ հաշվի առնենք այն հանգամանքը, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը, որը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, մեր կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի գտնում ենք, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2018/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 20.06.2018թ. թիվ 03/26-3/11110-18 գրությունը, «Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 18.06.2018թ. թիվ 177 գրությունը և կից փաստաթղթերը, ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 06.06.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 և 08.06.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի 28.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. տրված եզրակացությունը,

«Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սանհանգույցների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 06.06.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2.1 կետով որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասկնակից ճանաչել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին:

- 3.1 կետի «ա» ենթակետով որոշել է հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասկնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 79,608 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 08.06.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ն օնլայն բանկինգ համակարգի միջոցով՝ 05.06.2018թ. վճարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունները, սակայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների համակարգում հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը երևացել է 06.06.2018թ.:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.06.2018թ. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը 06.06.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ, որի համաձայն Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների

հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Երևանի թիվ 64 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սանհանգույցների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՔ-64ՀԴ-ԳՀԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.13 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից

ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 08.06.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (05.06.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 79,608 ՀՀ դրամ,

- հարկային պարտավորությունները կատարելու նպատակով՝ Ընկերությունը 05.06.2018թ. «Կոնվերսբանկ» ՓԲԸ-ի օնլայն բանկինգ համակարգի միջոցով մուտքագրել է 81.000 ՀՀ դրամի չափով գումար,

- Ընկերության կողմից 05.06.2018թ. կատարված վճարումները ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համակարգում արտացոլվել են 06.06.2018թ.,

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 15.06.2018թ. «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին տրված տեղեկանքի համաձայն Ընկերությունը 06.06.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը հաշվի առնելով, որ Ընկերության կողմից 05.06.2018թ. կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարում, սակայն հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համակարգում երևացել է 06.06.2018թ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք, հետևաբար

«Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

# Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 20.06.2018թ. թիվ 03/26-3/11110-18 գրությամբ «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**